

բ) Ս. Աստուածածնի տան տեղը. — Մեր Տէրը խաչին բարձունքէն Յովհաննէսին ըսաւ. «Ահա քու մայրդ» ցոյց տալով Ս. Կոյսը, և սիրելի աշակերտը այս վերջնոյս հետ միասին բնակեցաւ Սիոն լեւան վրայ, տան մը մէջ, մինչև այն օրը երբ հրեշտակապետը Աստուծոյ կողմէ տեղեկացուց անոր Վերափոխման ժամանակը:

Ըստ աւանդութեան, Ս. Կոյսը մեռած է 58 ին, 72 տարեկան հասակին մէջ: Անտարակոյս իր բնակարանը փոխուած է եկեղեցիի: Անդրէաս Կրետացին որ կ'ապրէր է. դարուն, կը գրէ թէ Ս. Կոյսը կը բնակէր Սիոն լեւան վրայ և իր տունն ալ եկեղեցիի փոխուած է: 1670 ին տակաւին կը ֆնային եկեղեցիին աւերակները: Յովհաննէս եպօ. Երուսաղէմացի կը գրէ. «Արդ ճշմարտութիւն տանս՝ հաստատեալ է յամենայն ազգաց որք կան Երուսաղէմ ասելով. աստ եկաց սուրբ կոյսն, և աստ մատուցանէր կուսանն Յովհաննէս ըզսուրբ պատարագն ի տեսութիւն սրբոյ կուսին: Աստ աղօթէր Ս. Կոյսն ի ժամ ննջմանն՝ ուր ժողովեցան գունդք առաքելոց, և էջ միածինն իւր Տէրն մեր յաւանդումն ամենամաքուր եւ սրբասնեալ հոգւոյ մօր իւրոյ և կուսի. և բարձեալ առաքելոցն զաստուածընկալ մարմինն տանէին ի Գեթսեմանի: Աստի ի վայր դէպ յարեւելս գոյ արտ մի, և ի ծայր անկեան արտին գոյր սիւն մի նշանադրեալ յաղազս հրաշից, և այժմ աւերեալ են»: Ս. Աստուածածնի տան տեղը Ամերիկացւոց գերմեզմանատան հարաւակողմը փոքր գետին մըն է, ուր կային քիչ ժամանակ առաջ մի քանի խոշոր քարեր (Հան. էջ 250, Ham. էջ 319-320):

Այս գետնին այժմ տիրացած են կաթոլիկ գերմանները որոնք շինած են ընդարձակ եկեղեցի և զանգակատուն մը: